ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 19» Փետրվարի 2025 թվականի N: 44 -Ա քաղաք Գյումրի

«ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև (ՀՎՀՀ 04247675 գործունեության հասցե Վեդի, Վանաշեն, Ա. Թովմասյան 33,, էլ հասցե՝ gnumner2020@mail.ru) 2024 թվականի սեպտեմբերի 27-ին կնքվել է «Պետության կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի թվով 20 մանկապարտեզների գույքի ձեռքբերման» «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-1» ծածկագրով պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատակարարել պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով, պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և N 2 հավելվածով՝ մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

Պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված 2024 թվականի հոկտեմբերի 14-ը, որից հետո ընկերության տնօրենի՝ Վաճառողի դիմումի հիման վրա պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 30 օրով՝ պայմանգրում կատարվել է փոփոխություն, կնքվել է «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-1-Հ1» ծածկագրով համաձայնագիր: Սակայն նշված ժամկետում ևս Վաճառողի կողմից չի ապահովվել պայմանագրային պարտավորությունների կատարումը և որևէ գույք չի մատակարարվել՝ խախտելով պայմանգրով սահմանված Վաճառողի պարտավորությունները:

«ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-1» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պատվիրատուն միակողմանի լուծարում է պայմանագիրը, քանի որ Վաճառողը խախտել

է պայմանագրի 2.1.1 կետի դրույթը՝ մատակարարման ժամկետները և որի հիմքով միակողմանի ամբողջությամբ լուծարվել է Վաճառողի հետ կնքված «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-1» ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 17-րդ մասի դ) ենթակետի համաձայն, եթե կնքված պայմանագիրը լուծարվում է չկատարելու հիմքով, ապա մասնակցից գանձվում է որակավորման և պայամագրի ապահովման գումարներ:

Վաճառողը կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար որպես որակավորման և պայմանագրի ապահովումներ Գնորդին է ներկայացրել տուժանքի համաձայնագրեր և կից վճարման պահանջագրեր՝ լրացված և հաստատված ընկերության կողմից:

Պայմանագիրը միակողմանի լուծարելու, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումներ գանձելու մասին 27.01.2025 թվականին ծանուցվել է Վաճառողին, ինչպես նաև ծանուցումը հրապարակվել է gnumner.minfin.am պաշտոնական կայքում:

Քանի որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) հանդիսացել է Վաճառողին սպասարկող բանկ, ուստի Վաճառողի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը և վճարման պահանջագրերը 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 03//00865-2025 գրությամբ ներկայացվել է Բանկ՝ Վաճառողից գանձելու «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-1» ծածկագրով պայմանագրի համար որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 203.000 (երկու հարյուր երեք հազար) ՀՀ դրամի և 136.000 (մեկ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամի չափով:

Ի պատասխան մեր գրության, Բանկը 2025 թվականի փետրվարի 04-ի թիվ 01/1-բգ -206 գրութամբ հայտնել է, որ «Պահանջագիրը չի կարող կատարվել Բանկի կողմից, քանի որ վճարողի հաշվի համարը սխալ է նշված»:

Բանկից ստացված գրության վերաբերյալ պարզաբանում ստանալու խնդրանքով 2025 թվականի փետրվարի 7-ի թիվ 03//01219-2025 գրությամբ դիմել ենք Վաճառողին, սակայն մինչ օրս՝ 14.02.2025 թվականը Վաճառողի կողմից պատասխան չի ստացվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին

մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 03//01420-2025 գրությամբ ծանուցվել է Վաճառողին, կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, որը 2025 թվականի փետրվարի 14-ին հրապարակվել է նաև gnumner.minfin.am պաշտոնական կայքում:

Հաշվի առնելով, որ առկա են «ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «ԱԳԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝